

ԿԱՐԾԻՔ

Նեյի Արմենի Աշրաֆյանի՝ «Քրեական պատասխանատվությունից ազատվելու տեսական և գործնական հիմնախնդիրները (տուժողի հետ հաշտվելու հիմքով)» վերտառությամբ, ԺԲ.00.05 (Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ատենախոսության վերաբերյալ

Բազմաթիվ քրեագետներ հանցագործության կանխման առավել արդյունավետ միջոց համարել են ոչ թե պատժի խստությունը, այլ դրա անխուսափելիությունը: Վերջինս իր ամրագրումն է գտել տարբեր երկրների քրեական օրենսգրքերում, համաձայն որի հանցանք կատարած յուրաքանչյուր անձ ենթակա է քրեական պատասխանատվության: Այս ամենով հանդերձ, տարբեր երկրների քրեական օրենսգրքեր, պատասխանատվության անխուսափելիության հետ միասին ամրագրել են քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու ինստիտուտ, նշելով այն անհրաժեշտ հիմքերն ու պայմանները, որոնց առկայության դեպքում միայն անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից:

Առաջին հայացքից կարող է թվալ, որ քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը հակասում է պատժի և պատասխանատվության անխուսափելիության սկզբունքին, սակայն միաժամանակ պարզ է նաև, որ գործնականում միշտ չէ, որ նպատակահարմար է հանցանք կատարած անձին ենթարկել քրեական պատասխանատվության և պատժի՝ կապված կատարված հանցավոր արարքի բնույթից, ծանրության աստիճանից, անձի դրսևորած վարքագծից, վերջինիս բնութագրող հանգամանքներից և այլն: Այդ առումով բազմաթիվ երկրներ, այդ թվում և Հայաստանի Հանրապետությունը իրենց քրեական օրենսգրքերում ամրագրել են քրեական օրենսդրության այնպիսի հիմնարար սկզբունքներ, ինչպիսիք են՝ արդարության, մարդասիրության, պատասխանատվության անհատականացման սկզբունքները, որոնց դրսևորման եղանակներից են հանդիսանում քրեական պատասխանատվությունից ազատելը գործուն գղջալու, տուժողի հետ հաշտվելու, իրադրության փոփոխման և այլ հիմքերով:

Ի տարբերություն արդարացման և այլ հիմքերով քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքների, որոնց դեպքում քրեական պատասխանատվության հարց ընդհանրապես առաջանալ չի կարող, քրեական

պատասխանատվությունից ազատելը հնարավոր է միայն այն դեպքերում, երբ անձի արարքը պարունակում է կոնկրետ հանցագործության բոլոր հատկանիշները և առկա են անձի քրեական պատասխանատվության ենթարկելու բոլոր նախադրյալները: Հետևաբար, քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը պետք է դիտել որպես պետության քրեական քաղաքականության կարևորագույն մաս, իսկ քրեական պատասխանատվությունից ազատելը տուժողի հետ հաշտվելու դեպքում՝ որպես քրեական քաղաքականության կարևորագույն մասի բաղադրիչ, որը և բազմակողմանի ու համապարփակ ուսումնասիրության է ենթարկվել ներկայացված ատենախոսության շրջանակներում:

Ինչպես նկատեցինք, ժամանակակից բազմաթիվ պետությունների օրենսդրությունների չափորոշիչներից են դրանց համապատասխանեցումը մարդասիրության սկզբունքների պահանջներին, մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի դրույթներից բխող բազմաթիվ միջազգային պայմանագրերին:

Մարդասիրության սկզբունքի պահանջների իրացումը պետությունները կատարել են տարբեր եղանակներով, այդ թվում՝ գործուն գղջալու, տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու, մեղադրողի և մեղադրյալի միջև գործարքի կնքման, հաշտության (մեղիացիայի), վերականգնողական արդարադատության և այլ ինստիտուտների ներդրման միջոցով: Ընդ որում, այդ ինստիտուտները համարվում են հեռանկարային, մի կողմից՝ անձի հետագա հանցավոր գործունեության կանխարգելման, մյուս կողմից՝ հանցագործություններից տուժած անձանց իրավունքների, մասնավորապես՝ նյութական վնասի վերականգնման առումով: Դրանով էլ պայմանավորված ինչպես տեսական, այնպես էլ գործնական կիրառական առումով հիմնավորված է հետազոտության թեմայի այժմեականությունը:

Ընդհանրապես, առանց ներելու քրեական արդարադատությունը կորցնում է իր իմաստը և վերածվում է պատժիչ համակարգի: Անկասկած քրեական իրավունքը չի կարող հիմնվել միայն պատժողական քաղաքականության վրա: Այդ մասին է վկայում քրեական իրավունքում քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը: Փաստորեն, պետությունը պատժողական քաղաքականությունից անցում է կատարում հաշտեցման կամ վերականգնողական արդարադատության, որի նպատակն է տուժողի իրավունքների վերականգնումը, նրան հասցված վնասի հատուցումը, հանցավորի կողմից մեղքի քավումը:

Հեղինակի կողմից հետազոտության նպատակ է սահմանվել, արդարության և մարդասիրության սկզբունքի իրագործման համատեքստում, տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի համալիր վերլուծությունը, վերոհիշյալ ինստիտուտի կատարելագործման առումով քրեական օրենսդրության զարգացման առավել հեռանկարային ուղղությունները որոշելը, այդ ոլորտում խրախուսական նորմերի օրենքի կիրառման հետ կապված օրենսդրական բացերի և խնդիրների վերհանումը և օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկությունների մշակումն ու ներկայացումը:

Վերոհիշյալ նպատակի իրականացման համար առաջ է քաշվել մի շարք խնդիրներ, մասնավորապես՝ հետազոտել, բացահայտել և վերլուծել քրեական իրավունքում խրախուսման յուրահատկությունները, դրական վարքագծի քրեաիրավական խթանման առանձնահատկությունները, խրախուսման որպես դրական խթանի տեսական հիմքերը, քննել քրեաիրավական խրախուսական նորմերը և դրանցում կողմերի հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը, վերհանել քրեական իրավունքում հաշտության հասկացության առանձնահատկությունները, պարզել տուժողի հետ հաշտության իրավական բնույթը և հաշտության տեղը քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերի մեջ, բացահայտել տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերն ու պայմանները, վերլուծել հաշտեցման ինստիտուտի բնույթն և օրենսդրական կարգավորումների առանձնահատկություններն արտասահմանյան երկրների քրեական օրենսդրություններում:

Ատենախոսության ուսումնասիրությունը վկայում է, որ հեղինակին հաջողվել է լուծել իր առջև դրված նպատակներն ու խնդիրները: Ուսումնասիրելով և վերհանելով տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու գործընթացը կարգավորող նորմերի գոյությունն ունեցող տեսական բազան, համադրելով այն նշված հարաբերությունները կարգավորող նորմերի գործնական կիրառության հետ, արդյունքում ներկայացվել են մի շարք տեսական եզրահանգումներ և օրենսդրական առաջարկություններ, որոնք արտացոլված են պաշտպանության ներկայացված հիմնական դրույթներում: Մասնավորապես՝ հեղինակն առաջարկել է ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածում կատարել հետևյալ բովանդակությամբ լրացում, այն

է «հաշտեցումը պետք է լինի կամավոր՝ հիմնված հանցանք գործած անձի կողմից իր մեղքը գիտակցելու վրա», «հաշտեցման ընթացակարգը պետք է հիմնված լինի կամավորության, գիտակցվածության, փոխադարձության վրա: Այն պետք է իրականացվի գործող օրենսդրությանը համապատասխան, իսկ արդյունքները պետք է պարտադիր լինեն հաշտության կողմերի, ինչպես նաև մյուս բոլոր անձանց համար»:

Ատենախոսը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածում նպատակահարմար է ներառել դրույթ այն մասին, որ հաշտեցման ընթացակարգի նպատակը սոցիալական արդարությունը վերականգնելն ու դաստիարակչական արդյունքի հասնելն է հանցագործությունը կատարած անձ առնչությամբ: Հեղինակը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածը պետք է կիրառելի լինի ոչ միայն ոչ մեծ ծանրության հանցագործությունների գործերով, այլև միջին ծանրության հանցագործություններով, միաժամանակ առաջարկում է սահմանել նորմ տուժողի հետ հաշտվելու դեպքում մեղմել բոլոր կատեգորիաների հանցագործությունների համար սահմանված պատիժը:

Հեղինակի կողմից կատարվել են նաև որոշակի գիտական հետաքրքրություն ներկայացնող այլ առաջարկություններ ևս կապված ինչպես տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատվելու ինստիտուտի ընդհանուր բովանդակային դրույթների, այնպես էլ ընդհանուր առմամբ քրեական պատասխանատվությունից ազատման ինստիտուտի հետ կապված: Մասնավորապես, հեղինակն առաջարկում է ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը լրացնել հետևյալ բառերով. «...և այլ գործողությունները, որոնք վկայում են հանցավորի զղջալու մասին»:

Հեղինակի կողմից հետազոտվել և դրա արդյունքում ներկայացվել է նաև արտասահմանյան երկրներում գործող հաշտեցման ինստիտուտի օրենսդրական ամրագրումները: Սպառիչ կերպով ներկայացվել է Ֆրանսիայում, Գերմանիայում, Անգլիայում և ԱՄՆ-ում այդ ինստիտուտի կիրարկման առանձնահատկությունները, հաշտարարության և վերականգնողական արդարադատության համակարգը, այդ թվում յուրվենալ ոլորտում, արվել կարևոր իրավահամեմատական վերլուծություններ:

Ատենախոսությունը ունի իրավական և փորձառական հիմք: Հեղինակը հիմնվել է ՀՀ քրեական օրենսգրքի, առանձին պետությունների քրեական օրենսգրքերի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների, ՀՀ վճռաբեկ

դատարանի նախադեպային որոշումների, վերաբերելի միջազգային փաստաթղթերի, տեսական աղբյուրների, ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի համակրգային ուսումնասիրության վրա:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, կրեք գլուխներից, որոնք ներառում են ինը պարագրաֆ, ամփոփումից, օգտագործված գրականության ցանկից:

Աշխատանքի առաջին գլխում վերլուծության է ենթարկվել տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի իրավական կարգավորման պատմատեսական զարգացման հիմնախնդիրները, ինչպես նաև տարբեր երկրների, քրեական օրենսդրություններով ամրագրված հաշտեցման ինստիտուտի կարգավորումները, նրանց իրավահամեմատական վերլուծությունը:

Երկրորդ գլխում վերլուծության է ենթարկվել քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի խրախուսական բնույթը, խրախուսման մեթոդները, դրական վարքագծի քրեաիրավական խթանումը, քրեաիրավական խրախուսական նորմերը և դրանցում կողմերի հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի ամրագրումը:

Երրորդ գլխում վերլուծվել է տուժողի հետ հաշտվելու դեպքում անձին քրեական պատասխանատվությունից ազատելու էությունն ու նշանակությունը, այդ թվում՝ հաշտեցման տեղը և դերը քրեական իրավունքում, տուժողի հետ հաշտության քրեաիրավական բնույթը և դրա տեղը քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերի շարքում, տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերն ու պայմանները:

Ատենախոսության սեղմագիրը արտացոլում է ատենախոսության հիմնական դրույթները և չի հակասում դրանց:

Այս ամենով հանդերձ ներկայացրած թեկնածուական աշխատանքում, մեր կարծիքով, առկա են որոշ վիճարկելի դիրքորոշումներ և դրույթներ, որոնք, ընդհանուր առմամբ չազդելով աշխատանքի դրական գնահատականի վրա, լրացուցիչ հիմնավորման կամ պարզաբանման կարիք ունեն: Այսպես՝

1. ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածը սահմանում է, որ ոչ մեծ ծանրության հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նա հաշտվել է տուժողի հետ և հատուցել կամ այլ կերպ հարթել է նրան պատճառված վնասը:

Փաստորեն, խնդիրը պետք է իրավակիրառողի հայեցողական գնահատմանն արժանանա տուժողի հետ հաշտվելու և պատճառված վնասը հատուցելու պարտադիր պայմանների առկայության կամ ապահովման դեպքում: Նման իմպերատիվ պահանջների դեպքում լրացուցիչ պարզաբանում է պահանջում հեղինակի արտահայտած այն տեսակետը, որ հաշտվելու համար բնավ պարտադիր չէ պատճառված վնասի հատուցումը: Անհասկանալի է նաև այնքանով, որ ըստ հեղինակի տուժողի հետ հաշտեցման միջոցով քրեական պատասխանատվությունից ազատելու էությունը հանգում է տուժողին հանցագործությամբ հասցված վնասի կամովին հատուցմանը կամ այլ կերպ հարթմանը: Կարծում ենք, որ նման դիրքորոշումը ընդունելի չէ ոչ միայն գործող քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածի կիրարկման շրջանակներում, այլև քրեական օրենսգրքի նախագծով տրված իրավակարգավորումների տեսանկյունից: Վերջին դեպքում այն, առավելագույնը, կարելի է դիտարկել ոչ թե ընդհանրապես պատասխանատվությունից ազատելու հիմք, այլ ընդամենը պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք: Կարծում ենք տուժողի համար առաջնայինը նախ և առաջ պատճառված վնասի վերականգնումն է, հետո միայն ներողությունը, գղջալը, որը ի տարբերություն վերականգնված վնասի չափելի չէ, խիստ սուբյեկտիվ է և երբեմն կարող է կատարվել գուտ պատժից ու պատասխանատվությունից խուսափելու նպատակով: Հետևաբար, պատահական չէ, որ հաշտության էությունը հանդիսանում է պատճառված վնասի վերականգնումը, այսինքն այստեղ առաջնային նշանակությունը տրվում է օբյեկտիվորեն հանցավորի դրսևորած ակտիվ վարքագծին, ոչ թե ստուգման ոչ ենթակա խոստումներին, հավաստիացումներին, երդումներին և այլն: Ընդհարապես խրախուսական նորմերի կարևորությունը կասկած չի հարուցում, սակայն մարդասիրությունը չի կարող դրսևորվել միայն հանցանք կատարած անձի նկատմամբ, այլ այն հավասարապես պետք է դրսևորվի նաև հասարակության և պետության նկատմամբ և որ այս երկուսը պետք է անպայման հակակշռեն միմյանց, որը և պետք է լինի խրախուսական նորմերի վերաբերյալ արված առաջարկությունների, հետևությունների, օրենսդրական նախաձեռնությունների և ընդունվող օրենքների հիմքում: Այս գաղափարն էր ընկած դեռևս միջնադարյան հայ իրավունքի խոշորագույն մտածող Մխիթար Գոշի շուրջ 850 տարի առաջ պատիժների սահմանման հիմքում ներկայացված պահանջներում: Գոշն էր, ով մարդասիրությունը բարոյական արժեքից գատ դիտարկել և քննարկել է որպես իրավական սկզբունք՝ օրինականության, արդարության, պատժի անհատականացման հետ միասին:

Այսինքն տուժողի հետ հաշտվելը պետք է բխի ոչ միայն վեճի կողմերի, այն է՝ հանցավորի ու տուժողի շահերից, այլ հավասարապես նաև հասարակության և պետության շահերից, քանի որ այն ենթադրում է վերացնել հանցագործության բացասական հետևանքները և դրանով իսկ վերականգնել սոցիալական արդարությունը, իսկ սոցիալական արդարության բաղադրիչը դա նաև պատճառված վնասի վերականգնումն է, իսկ առանց դրա անձին քրեական պատասխանատվությունից ազատելը կնստեմացնի պատժի դերը քրեական արդարադատություն իրականացնելիս, առավել ևս, երբ հասարակության աչքում և տարբեր անձանց ընկալմամբ հանցագործություն կատարած անձին պատժից ազատելը արդարացի չէ և «վատ օրինակ» կարող է ծառայել այլոց համար:

2.Նույն հարցի շրջանակում նկատենք, որ հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելը հանդիսանում է իրավակիրառողի հայեցողական իրավունքը և ոչ թե պարտականությունը: Այդ դեպքում խնդիր է, թե գործնականում ինչպես պետք է լուծել այն գործերի ընթացքը, երբ հաշտությունն առկա է, վնասը արդեն հատուցված, բայց իրավակիրառողը համոզված չէ անձի անկեղծորեն զղջալու և հետագայում հանրորեն վտանգավոր արարք թույլ չտալու մեջ: Այս դեպքում ինչպե՞ս է լուծվելու արդեն իսկ հատուցված վնասի հարցը: Հայտնի է նաև, որ քրեական պատասխանատվությունից ազատելը կրում է երկրնսրելի, այն է՝ հայեցողական և պարտադիր բնույթ, սակայն անհասկանալի է թե ինչով է պայմանավորված և գիտականորեն հիմնավորված ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություններով պատասխանատվությունից ազատման ոչ թե պարտադիր, այլ հայեցողական բնույթը, այն դեպքում, երբ ավելի ծանր հանցագործություններով այն կրում է պարտադիր բնույթ:

3.Հեղինակի կողմից ներկայացրած քրեական նոր օրենսգրքի նախագծով խնդիր է դրվում տուժողի կողմից հաշտվելու ինստիտուտը կիրառել առաջին անգամ ոչ միայն ոչ մեծ, այլև միջին ծանրության հանցանք կատարելու դեպքում: Այս առումով հստակեցման կարիք ունի այն հարցը, թե «առաջին անգամը» վերաբերում է ընդհանրապես հանցանք կատարելուն, թե առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարելուն և այդ համատեքստում արդյոք հնարավոր է նշված ինստիտուտի կիրառումը, երբ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործությանը նախորդել է հանցագործություն, այդ թվում և ծանր, որի համար անձը դատապարտվել է և արդեն իսկ մարվել է դատվածությունը, կամ

մեղադրվում է այնպիսի հանցագործությունների համակցությամբ, որոնցից մեկը ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություն է:

4. Մեր կարծիքով հիմնավորված չէ այն տեսակետը, որ ոչ մեծ ծանրության հանցանք կատարելու դեպքում ձեռք բերած հաշտությունը բացառում է անձի կողմից նոր հանցանք կատարելը, իսկ ավելի ծանր հանցագործությունների դեպքում ձեռք բերած հաշտությունը չի կարող դիտվել նոր հանցագործություն չկատարելու երաշխիք: Նկատենք, որ որևէ մեկը չի կարող բացառել նաև ոչ մեծ ծանրության հանցանքի դեպքում տուժողի հետ հաշտության պատճից խուսափելու նպատակը: Այսինքն՝ հաշտությունը պայմանավորված արարքի ծանրությունից չի կարող ունենալ «ամրության» տարբեր աստիճաններ: Այսպես, եթե Գերմանիայում հաշտությունը կիրառվում է ոչ մեծ ծանրության հանցագործությունների դեպքերում, ապա Ֆրանսիայում, Անգլիայում, ԱՄՆ-ում այդ հարցում որևէ սահմանափակումներ չկան և հաշտությունը կարող է կիրառվել բոլոր կատեգորիաների հանցագործությունների դեպքերում: Ընդհանրապես խոցելի է այն մտտեցումը, որ հաշտեցումը բացառում է նոր հանցագործության կատարումը: Հաշտեցումը ընդամենը կարող է նվազեցնել նոր հանցագործության կատարման հնարավորությունը: Չի կարող ներողության, զղջման, հատուցման առումով ձեռք բերված որևէ հաշտություն թույլ տալ իրավակիրառողին եզրակացնել, որ համապատասխան անձն այլևս հանցանք չի գործի:

Ներկայացված նկատառումները կրում են մասնավոր բնույթ, այդպիսիք չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը և պայմանավորված են աշխատանքն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ:

Գտնում եմ, որ գրախոսվող աշխատանքն իրենից ներկայացնում է ինքնուրույն, ամբողջական, ավարտուն հետազոտություն, որում հեղինակին հաջողվել է լուծել իր առջև դրված խնդիրներն ու կատարված հետազոտության արդյունքում ներկայացնել ինքնուրույն առաջարկություններ, որի մասին են վկայում պաշտպանության ներկայացվող դրույթներում և աշխատանքի եզրափակիչ մասում շարադրված հետևությունները: Կատարված հետազոտությունների արդյունքների հիման վրա ատենախոսի կողմից մշակվել և ներկայացվել են համապատասխան օրենսդրական առաջարկություններ, որոնք կարող են օգտագործվել քրեական օրենսդրության կատարելագործման նպատակով:

Ատենախոսությունը համապատասխանում է թեկնածուական աշխատանքներին ներկայացվող չափորոշիչներին, հետազոտության արդյունքում կատարված եզրահանգումները գիտականորեն հիմնավորված են ու տրամաբանորեն փաստարկված:

Գտնում եմ, որ Նելլի Արմենի Աշրաֆյանի՝ «Քրեական պատասխանատվությունից ազատվելու տեսական և գործնական հիմնախնդիրները (տուժողի հետ հաշտվելու հիմքով)» թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ի 6-րդ և 7-րդ կետերին, իսկ հեղինակն արժանի է հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

Առաջին պաշտոնական ընդդիմախոս,
Իրավաբանական գիտությունների դոկտոր՝



Ա.Ա. Թամազյան

Իրավաբանական գիտությունների դոկտոր Ա. Ա. Թամազյանի ստորագրությունը հաստատում եմ՝

Հայ-Ռուսական /Մլավոնական/ համալսարանի
գիտական քարտուղար՝



Ռ. Ս. Կասաբաբովա